

Հարգելի պացիենտ,

Դուք հավանաբար կարդացել եք Ձեր դեղի տուփի վրա դեղահատերի բաղադրության փոփոխության մասին, ինչպես նաև նկատել եք, որ փաթեթավորման ձևավորումը տարբերվում է Ձեր հին դեղի փաթեթավորումից: Բաղադրության փոփոխությամբ պայմանավորված մենք կատարել ենք նաև տուփի ձևավորման փոփոխություն՝ տեսողական առումով նախազգուշացնելու և շահագրգռելու համար, որպեսզի ավելին կարդաք փոփոխությունների մասին և, հետևաբար, վստահորեն ընդունեք նոր բաղադրությամբ դեղը:

Փոփոխությունները վերաբերում են դեղի բաղադրության բարելավմանը՝ օժանդակ նյութերից մի քանիսի փոփոխության միջոցով: Այդ փոփոխությունները նպաստում են դեղի կայունության բարելավմանը, ինչը կարևոր է Ձեզ համար: Սակայն ակտիվ բաղադրատարր լևոթիրոքսին նատրիումը մնում է անփոփոխ: Օժանդակ նյութերի փոխարինումը չի ազդում դեղի որակի, անվտանգության և արդյունավետության վրա:

Լ-Թիրոքսին Բեռլին-Քեմի (լևոթիրոքսին). բաղադրության փոփոխություններ

1. Ինչի՞ համար է օգտագործվում լևոթիրոքսինը:
2. Կոնկրետ ի՞նչ փոփոխություններ են կատարվել դեղի բաղադրության մեջ:
3. Տարբերվո՞ւմ են այս նոր բաղադրությամբ դեղի օգտագործման հրահանգները:
4. Ի՞նչ պետք է անել, եթե դեղագետն առաջին անգամ նոր բաղադրությամբ դեղն է առաջարկել: Անհրաժե՞շտ է խորհրդակցել բժշկի հետ:
5. Որո՞նք են դեղի բաղադրության փոփոխության հետ կապված ռիսկերը:
6. Որո՞նք են վահանագեղձի խանգարումների ախտանիշները, որոնց մասին պետք է տեղեկացված լինել:
7. Ի՞նչ փոփոխություններ են կատարվել դեղի տուփի և բլիստերի վրա:

1. Ինչի՞ համար է օգտագործվում լևոթիրոքսինը:

Լևոթիրոքսինը վահանաձև գեղձի փոխարինող հորմոն է, որն օգտագործվում է հիպոթիրեոզի դեպքում (վահանաձև գեղձի հորմոնի անբավարար արտազատում կամ դրա բացակայություն) կամ այն իրավիճակներում, երբ անհրաժեշտ է նվազեցնել վահանաձև գեղձի թիրեոտրոպ հորմոնի (ԹՏՀ) արտազատումը:

2. Կոնկրետ ի՞նչ փոփոխություններ են կատարվել դեղի բաղադրության մեջ:

Կատարվել են հետևյալ փոփոխությունները.

- Բաղադրության բարելավում, որի նպատակն է ապահովել ակտիվ նյութի, այսինքն՝ լնթիրոքսինի կայունությունը դեղի ողջ պիտանիության ժամկետի ընթացքում:

3. Տարբերվում են այս նոր բաղադրությամբ դեղի օգտագործման հրահանգները:

Ոչ, դեղի ընդունման եղանակը չի փոխվել: Մշտապես հետևեք Ձեր բժշկի ցուցումներին՝ կապված դեղաչափերի, դեղի ընդունման և հետագա հսկողության հետ:

4. Ի՞նչ պետք է անել, եթե դեղագետն առաջին անգամ նոր բաղադրությամբ դեղն է առաջարկել: Անհրաժեշտ է խորհրդակցել բժշկի հետ:

Ստուգեք Ձեզ տրված դեղի անվանումը և դեղաչափը, քանի որ դեղի տուփի և բլիստերի գույները կարող են փոխված լինել (տես Հավելվածը):

Օգտագործեք նոր բաղադրությամբ դեղը ճիշտ նույն եղանակով, ինչպես օգտագործել եք հինը:

Կապ հաստատեք Ձեր բժշկի հետ՝ ճշտելու համար, թե արդյոք անհրաժեշտ է ստուգել Ձեր թիրեոտրոպ հորմոնը՝ նոր բաղադրությամբ դեղի ընդունումը սկսելուց հետո:

Նոր բաղադրությամբ դեղի օգտագործումը սկսելուց հետո անհրաժեշտ է շարունակել ընդունել միայն դա:

5. Որո՞նք են դեղի բաղադրության փոփոխության հետ կապված ռիսկերը:

Անվտանգության առումով որևէ փոփոխություն չի սպասվում: Ակտիվ բաղադրատարրն, ինչպես նախկինում, լնթիրոքսին նատրիումն է՝ նույն աղբյուրից: Փոխվել են միայն օժանդակ նյութերը:

Ապացուցված է, որ նոր օժանդակ նյութերը չեն փոխում ակտիվ նյութի քանակությունը, որը մուտք է գործում արյան մեջ, և չեն ազդում արագության վրա, որով այն հասնում է թիրախային օրգանին: Դա երաշխավորում է, որ արդյունավետությունն ու անվտանգությունը նույնն են, ինչ հին բաղադրության դեպքում:

Այնուհանդերձ, հին և նոր բաղադրությամբ դեղի ակտիվ նյութը կարող է տարբեր կերպ ընդունվել որոշ պացիենտների կողմից, ինչը կարող է հանգեցնել վահանաձև գեղձի ֆունկցիայի խանգարման (տես Հարց 6. «Որո՞նք են վահանաձև գեղձի խանգարումների ախտանիշները, որոնց մասին պետք է տեղեկացված լինել»): Հնարավորինս շուտ դիմեք Ձեր բժշկին, եթե կարծում եք, որ Ձեզ մոտ առկա են վահանաձև գեղձի խանգարման մասին վկայող ախտանիշներ:



6. Որո՞նք են վահանաձև գեղձի խանգարումների ախտանիշները, որոնց մասին պետք է տեղեկացված լինել:

Վահանաձև գեղձի խանգարման կլինիկական ախտանիշները սպեցիֆիկ չեն և կարող են տարբեր լինել տարբեր պացիենտների մոտ:

Հիպոթիրեոզ. անսովոր հոգնածությունը, փորկապությունը և դանդաղաշարժությունը ամենատարածված ախտանիշներն են, որոնք կապված են թիրեոիդ հորմոնի անբավարար մակարդակի հետ:

Հիպերթիրեոզ. քրտնարտադրությունը, արագասրտությունը (սրտի ռիթմի արագացում), սրտխփոցները և գրգռվածությունն ախտանիշներ են, որոնք կարող են վկայել թիրեոիդ հորմոնի չափազանց բարձր մակարդակի մասին:

7. Ի՞նչ փոփոխություններ են կատարվել դեղի տուփի և բլիստերի վրա:

| | |
|---|--|
| L-Թիրոքսին 50 Բեռլին-Քեմի 50 մկգ հին բաղադրությամբ դեղահատեր | L-Թիրոքսին 50 Բեռլին-Քեմի 50 մկգ նոր բաղադրությամբ դեղահատեր |
|  |  |
| | |

<Բիստերի նկարը>



<Բիստերի նկարը>

